



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Միտելի՛ համալսարանական

Ես «Քո ժամանակն» եմ: Ուրում եմ դառնալ քո ընկերը: Խոսարանում եմ, որ մեր պրոպյաները չեն սահմանափակվի միայն համալսարանին վերաբերող թեմաներով: Իմ միջոցով կրեսնես քո ժամանակի հեղաքրքիր մարդկանց, առհասարակ, խոսարանում եմ՝ ինձ հետ չես ձանձրանա: Հուսամ՝ սպասված հյուր կլինեմ:



Փետրվարի 28-ին Մայր բուհում Սումգայիթի հայկական ջարդերի անմեղ զոհերի հիշատակին նվիրված միջոցառում-երթ կազմակերպվեց։
Համայնաքաղաքականների պատասխանների գրությունները կոչ են՝ նրանք չմոռանալ նորագույն պատմության արդյունալի էջերի մասին։

«Աղոթքի լեզուն»

Փետրվարի 21-ը Հայաստանում և Արցախում նշում են որպես մայրենի լեզվի օր: Այն միջազգային տոն հռչակվել է 1999թ-ի նոյեմբերին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Նպատակը – լեզվական, մշակութային քաղմագաանության ու քաղմայեցու մշակույթների գարգազմանն ու պահպանմանը նպաստելն է:

Մայրենիի օրը մեծ շուքով նշվեց Արցախի պետական համալսարանում՝ երաժշտական գործիքների նվագակցմամբ, ազգային երգ ու պարով և ամենակարևորը հնչում էին ելույթներ անաղարտ մայրենիով։ Միջոցառման շրջանակի ևս մեկ անգամ հիշեցի՞ր ուր անցած ճանապարհը և այդ ճանապարհի հաղթահարման գործում մայրենիի ունեցած անգնհատելի դերը։

Լեզվի աղավաղումներ տեսնում ենք հասարակության բոլոր շերտերում, նույնիսկ գիտական աստիճան ունեցող մարդկանց մոտ: Դրա համար մեզից յուրաքանչյուրը պետք է դքստորի հատուկ վերաբերմունք ու չմոտենք այն: Պետք է առջնությունը հետևյալ նշանակալի տակ: «Անաղարատ պահենք մեր մայրենին», քանզի այն մեր հայապահպանության գլխավոր գնքնն է:

Մելիքնե՛ն Մուսայելյան
լրագ. Ո կուրս

ՈՎԲԵՐ ԵՆ ԱՐԴՅՈՔ

Շատ հոշակավոր ու հայտնի մարդիկ պատմություն են մտել ու հաստատվել իրենց կեղծամուսնեքով: Սակայն բացի կեղծամուսնեքց, կան մականամուսնեք (պիտոսնեք), որոնք տրվել են հաճախ մանկության, երբեմն էլ երիտասարդության շրջանում: Հետաքրքիր կլինի իմանալ պատմական, հայտնի դեմքերի մականամուսնեքը:

Պիտակները կրողների շարքում է հայտնվել հռոմեական կայսր Գայոս Հուլիոս Լեսար, Օգոստոս Գերմանիկոսը, որը պատմության մեջ առավել հայտնի է Կալիգուա մականունով: Կալիգուա լատիներենից թարգմանվում է որպես կաշվե կոշիկ: Կան երկու վարկածներ, թե ինչու են նրան այդպես կոչել: Ըստ առաջինի՝ մանուկ իսաակովմ հայրը որդուն իր հետ տանում էր առգվանկան ճամբար, և փորձիք նախընտրում էր փաղաքշական Կալիգուլան ի տարբերություն կոպիտ, զինվորական կալիգա բառից: Երկրորդ վարկածի համաձայն բռնի երիտասարդության տարիներին, երբ նա ծառայում էր առգվանկան ճամբարում, նրան նվիրում են կաշվե կոշիկները, որից էլ առաջացավ նրա մականունը:

Պատմական դեմքերից ծիծաղաշարժ էր Նորվեգիայի ու Դանիայի թագավոր Հարոլդ Առաջինի/930-986/ մականունը: Որպես թագավոր նա հայտնի է Հարոլդ Կլապտանաում, անգլերեն Bluetooth: Նորվեգերեն նրա մականունը գրվում է Blatann: «Bla» բառը նշանակում է նշանակել է մուգ կամ սև: Եվ թագավորական ատամները, քստ ամենայնի, մուգ են եղել կելտոստոլթյան պատճառով: Բայց բառի իմաստը ժամանակի քնթացքում փոխվել է ու հիմա նշանակում է կլապյուտ: Բառիմաստի փոփոխման հետ փոխվել է նաև Հարոլդի ատամների գույնը:

Ռուս իշխան Վսևվոլոդ Մեծ թոչնաբայնը /1154-1212/ այդպես է կոչվել այն պատճառով, որ

իրենից հետո թողել է ութ որդի և չորս աղջիկ:

Վերածննդի դարաշրջանի իտալացի գեղանկարիչ Տինտորետտո Յակոբո Ռոբուստինի հայտնի ազգանունը ստացել է հոր անվանգիտություն անվանումովից: Իտալերեն տինտորետտո – ներկարար:

Քչերն են ճանաչում Սոֆյա Շեյնդլյա – Սուրա
Լեյբովնա Սոլոմոնիակին, իսկ հայտնի ժուսական
գող ու ավագակ Սոնյկա Զոլոտին Ռուչկիի անունը
բավական հայտնի է:

Ոչ վաղ անցյալի ու ներկայիս քաղաքական գործիչներին նույնպես չհայտնվեց ազատվելու ամսվա նունները, այսպես Ջորջ Բուշ Կուստերին կալված կոնտրոստից անվանում էին քովբոյ կամ բուրիկ: ԳՂՀ նախկին կանցլեր Գերիադը, Շրոյդերին անվանում էին «Շրեյ», ինչը կերպարաններին թարգմանությամբ նշանակում է անհարկավոր իր: Սիդերլանդներին նախկին վարչապետ Յան Պետեր Բարկենմանդին հայտնի էին ռոնդրոսի գլաբանալի արտաքին նմանությամբ պատճառով անվանում էին Տարրի Փոքեր:

Էջուարդ Շեփարնադզեն «Միսթեր այրն» նրա նախորդ Անդրեյ Գրոմիկոյի մականվան «Միսթեր ոչի» համաբանությամբ: Բոլորին հայտնի է նաև Երկաթե լեդի կեղծանունը, որով կոչում էին Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեչչերին: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին ուսանողական տարիներին կոչել են ցեց: Ճաղատ էքորոշաշկա կոչում են Վ.Զյուգանովին, Ժիրիկ էլ Վ.Ժիրինովսկու:

Հայ քաղաքական գործիչների մականունները նույնպես լայն տարածում են գտել ժողովրդի մեջ: Այդ մականունները երբեմն ավելի առաջ են րնկնում, քան իրական անունները:

Տաթև ՄԻՐԶՈՅԱՆ
Լրագ. 2-րդ կուրս

ԱՐԴՏ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Մարտի 5-ին ԱրՊՀ
ֆիզիկամաթեմատիկական
ֆակուլտետում
կազմակերպվել էր
ինտելեկտուալ
խաղ-մրցույթ:



Մարտի 6-ին ԱրՊՀ
հայոց լեզվի ու
գրականության և օտար
լեզուների ֆակուլտետում
կազմակերպվել էր
Մ. Լևրոնտովի ծննդյան
200-ամյակին նվիրված
գրական-երաժշտական
գերեկույթ:



Մարտի 10-ին ԱրՊՀ
քիմիկենսաբանական
ֆակուլտետում
կազմակերպվել էր
իմտելեկտուալ
խաղ-մրցույթ:




Մարտի 11-ին ԱրՊՀ
հայոց լեզվի ու
գրականության և օտար
լեզուների ֆակուլտետում
կազմակերպվել էր մարտի
3-ին հպիրված միջոցառում:

«Ձմեռային գավաթ - 2015»



Մայր բուհի 8 ֆակուլտետների ազդագրերի տախտակին հայտնվեց ահա այս հաղորդագրությունը



Եւ սկսվեց արկածներով լի հետաքրքիր մի ճամփորդություն...

Հավաքվեցին ինքնատիպ, հետաքրքիր, բեմական ճկունությամբ, կենսասեր մի խումբ ուսանողներ, որոնք կարծես թե քարոզում էին մի գաղափար՝ «Լոխ լյավա», և հենց այս գաղափարն էլ դարձավ խմբի անունը: Խմբի աշխատանքները առաջին իսկ օրվանից ուղղորդում էր ՈւՀՏԱ, ՀԿ և Լ. բաժնի աշխատող Կարեն Մեժլումյանը: Պետք է խոստովանել, որ այն մեծ ջանքերը, որ Կարենը չէր խնայում մեր ելույթի համար, և այնքան փորձերը, որ մենք անցկացրինք, տվեցին իրենց պտուղները:

Փետրվարի 7-ին Ծաղկաձոր քաղաքում տեղի ունեցավ «KBH-ի ուսանողների ձմեռային գավաթ 2015» հումորային մրցույթը: Արցախի պետական համալսարանը առաջին անգամ էր այսպիսի մրցույթային թիմ ներկայացնում: Գավաթը, որ մենք նվաճեցինք կոչվում էր «Приз зрительских симпатий»: Այդ մրցանակի համար մենք շատ ուրախ էինք:

Այն բոլոր նրջանիկ պահերի համար, որոնք մենք ապրեցինք ուզում եմ շնորհակալություն հայտնել ԱրՊՀ ղեկավարությանը, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանին մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

Անի Հարությունյան
Հայոց լեզվի և գրակ. և օրար լեզուների ֆակուլտետ

Սկսվեցին ինքնատիպ, հետաքրքիր, բեմական ճկունությամբ, կենսասեր մի խումբ ուսանողներ, որոնք կարծես թե քարոզում էին մի գաղափար՝ «Լոխ լյավա», և հենց այս գաղափարն էլ դարձավ խմբի անունը: Խմբի աշխատանքները առաջին իսկ օրվանից ուղղորդում էր ՈւՀՏԱ, ՀԿ և Լ. բաժնի աշխատող Կարեն Մեժլումյանը: Պետք է խոստովանել, որ այն մեծ ջանքերը, որ Կարենը չէր խնայում մեր ելույթի համար, և այնքան փորձերը, որ մենք անցկացրինք, տվեցին իրենց պտուղները:

ինքնադրսևորվելու, լսելով առաջարկի մասին լինել թիմի մի մասնիկը, առանց երկմտելու ընդունեցի այն:

Անփորձառու լինելը շատ էր խանգարում ինձ, բայց փորձերի քրտնաջան աշխատելու և նվիրվածության շնորհիվ թիմակից ընկերներիս հետ հավասարազոր կարողացա ելույթ ունենալ: Չգիտեմ թե քանի անգամ դեռ, որպես թիմի անդամ կներկայանամ տարբեր մրցույթներում, բայց այդ պոզիտիվ տրամադրությունը հաստատ կմնա իմ հիշողությունների մեջ տարիներ շարունակ:

Ռուզաննա Առաքելյան
Քիմ/Կենս ֆակուլտետ



Լինելով ԱրՊՀ ՈւՀՏԱ թիմի անդամներից մեկը, ճիշտն ասաց, դժվար է հակիրճ ներկայացնել իմ ապրումները...

Ձմեռային գավաթին պատրաստվելու ժամանակը անմոռանալի էր:

Հաշվի առնելով, որ ԱրՊՀ ՈւՀՏԱ թիմի առաջին ելույթն էր բուհի պատերից դուրս, մենք պատրաստ էինք նաև առողջ քննադատության: Շատ ակտիվ և ուշադիր հետևում էի սոց-ցանցերում մեկնաբանություններին և youtube-յան դիտողություններին: Այն արդեն դիտվել է 1600 անգամ, իսկ սոց-ցանցերում այն շարունակում է հավաքել հավանումներ: Հետևելով այս ամենին, կարող եմ ներառել, թիմի անդամների ելույթը ստացվել է մեզ մոտ:

Արամ Կարապետյան
Ճարտարագիտական ֆակուլտետ



Այս տարի առաջին անգամ մասնակցել եմ ՈւՀՏԱ ձմեռային գավաթին՝ որպես մասնակից:

Տպավորություններն այնքան շատ են և այնքան հետաքրքիր, որ պահեր կան որ չես կարողանում բացատրել մարդկային լեզվով: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում կազմակերպիչներին և թիմակիցներին՝ նման մթնոլորտ ստեղծելու համար: Մենք առաջին տեղը չենք գրավել, բայց վերադարձել ենք հաղթանակած:

Գոռ Բալասանյան
Պատմ. և քաղաք. ֆակուլտետ



Զգալով մեծ պատասխանատվություն, որ ԱրՊՀ-ի ՈւՀՏԱ թիմը պետք է մրցակցի ՀՀ առաջատար բուհերի թիմերի հետ «Ձմեռային գավաթ»-ի շրջանակներում կայանալիք փառատոնին, մենք մեր առաջ դրեցինք խնդիր, ներկայանալ պատշաճ կերպով և արժանի պայքար մղել բեմահարթակում:

Փորձերը սկսեցինք անհապաղ, քանզի հումոր ստեղծելու և բեմադրելու համար, առաջին պահանջը մոտիվացված աշխատելն է: Երբ ամեն ինչ պատրաստ էր մեզ խանգարում էր ընթացող քննաշրջանը: Եվ ստիպված էինք այնպես կազմակերպել փորձերը, որպեսզի չվնասենք մասնակից ուսանողների քննություններին պատրաստվելու ընթացքին:

Այս ամենի շնորհիվ կարծես թե հաջողվեց անել այն ինչ խնդիր մենք ինքներս դրել էինք մեր առջև:

Իմ անունից կցանկանայի շնորհակալություն հայտնել բուհի ղեկավար կազմին, մեզ վստահելու համար, մասնակիցներին քրտնաջան աշխատելու, և ՈւՀՏԱ «Արցախի հավաքական» թիմի անդամներ Վլադիմիր Գասպարյանին և Տիգրան Գալստյանին իրենց մասնակցությունն ունենալու համար:

Հուսով եմ ԱրՊՀ ՈւՀՏԱ թիմը դեռ շատ հաջողությունների կհասնի, մեկնարկը տված է....

Կարեն Մեժլումյան
ՈւՀՏԱ. ՀԿ և Լ բաժին



ԳԱՐՈՒՆԸ ԳԱՐՈՒՆ ԲԵՐԵՅ ԿԱՆԱՆՅ ԱԶԲԵՐՈՎ

*Եկե՛ք այս գարուն, ով մարդիկ'կ բարի,
Շուրջե՛ք իրար ժպիտ ու ծիծաղ,
Միշտ բարի խոսքեր,
Ծաղիկներ ու սեր...*

Գարունը վերածնունդ է և այն մեկնարկում է կանանց միամսյակով...

Արբշիտ գույներով ներբողելով մայր բնությունն ու աստվածաշնչյան ամենանուրբ էակներին՝ գարունը հյուրընկալվում և նոր շունչ է հաղորդում բոլոր նրանց, ովքեր պատրաստ են հավուր պատշաճի զգալ նրա ողջ շունչն ու հմայքը:

Ասում են թե կինն ու գարունը չեն տարբերվում միմյանցից: Գարունը հենց կինն է՝ միշտ ծաղկող, կինն էլ իր էությանմբ գարուն է որ կա՝ հանելուկներով ու անակնկալներով լի, զարնան պես փոփոխական, համառ ու երբեմն էլ անսանձ, բայց կայուն առաքինի կինը թանկ է բոլոր գոհարներից: Յուրօրինակ է կանանց բերած դերն ու ազդեցությունը գիտության և

կրթության, հասարակական և քաղաքական կյանքի բարօրության ու կենսագործունեության գործում, իսկ ունեզած ղեռո անգնահատելի



ընտանիքների ամրության, քրիստոնեական արժեքներով և հայեցի ավանդներով մեր զավակներին կրթելու գործում՝ լինելով ու մնալով սիրո ու քնքշանքի, հավատարմության ու անձնուրաց նվիրումի խտացումը մեր կյանքում:

Բայց և առաջնահերթ կնոջ կոչման վեհագույն արժանիքը մայրությունն է՝ ընտանիքի վեմ ու խարխալ լինելը:

Գարունը սիրո և նրջանկության ժամանակահատվածն է. նոր սեր, նոր հույզեր ու նոր մտահղացումներ: Այն իր հետ բերեց լույս, հավատ, լավատեսություն ու ջերմություն:

Շնորհավորում ենք բոլոր կանանց ու աղջիկներին գարնան միամսյա տոնի կապակցությամբ, բարեմաղթելով գարնան շունչ ու ջերմություն, մշտադալար գեղեցկություն ու կանացի նրջանկություն:

Սիրեցեք և եղեք սիրված, քանզի բնությունն արդեն Ձեզ օժտել է յուրօրինակ մենաշնորհով՝ Դուք եք հենապունը, Ձեր ձեռքերում է ազգի լուսաշող ապագան և սերունդների հայեցի դաստիարակության ազգանվեր գործը:

Խաղաղ և լուսաշող գարուն բոլորիդ...

Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆ
ՈւՀՏԱ. ՀԿ և Լ բաժին

№ 6 Մարտ, 2015. ՈւՀՏԱ, ՀԿ և Լ բաժին

